

DONALD E. MILLER AND LORNA TOURIAN
MILLER, SURVIVORS : AN ORAL HISTORY OF
THE ARMENIAN GENOCIDE, UNIVERSITY OF
CALIFORNIA, BERKELEY /LOS ANGELES/,
LONDON, 1993, PP. 242.

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

1915 թուականի հայկական ցեղասպանութենէն վերապրած անձանց հետ հարցազրոյցներ վարել եւ անոնց ձայներիզներն ու տեսերիզները իբրեւ պատմական վկայութիւն եւ սկզբնաղբիւր օգտագործելը հայագիտութեան մէջ ընդհանրացաւ միայն վերջին 15-20 տարիներուն: Սա խիստ կենսական միջոցառում մըն էր, քանի որ ցեղասպանութեան ժամանակակից սերունդի վերջին մնացորդները յառաջացած տարիքի բերմամբ արագօրէն մեզի հրաժեշտ կու տան: Մօտաւոր հաշուումներով, ԱՄՆ-ի, Գանատայի, Յունաստանի, Ֆրանսայի, Հայաստանի, Լիբանանի մէջ եւ այլուր կատարուած այս տեսակ հարցազրոյցներուն թիւը կը հասնի մօտ 2500-ի:

Միւրերեւոյ աշխատասիրութիւնը Եղեռնին նուիրուած առաջին ուսումնասիրութիւնն է, որ ամբողջապէս կառուցուած է այսպիսի հարցազրոյցներու հիման վրայ: Ներածականին մէջ, Հարաւային Քալիֆօռնիոյ Համալսարանի Կրօնագիտութեան Բաժանմունքի դասախօս Տանըլտ Միլլըրը մանրամասն կերպով կը պատմէ, թէ ինք եւ իր հայագիտի տիկինը՝ Լորնան ի՛նչպէս յղացան այս գործը պատրաստելու գաղափարը եւ թէ անիկա ի՛նչպէս հրապարակ եկաւ 15 տարի տեւող տքնաջան աշխատանքի մը շնորհիւ:

Ժամանակագրական յաջորդականութեամբ եւ ընդհանուր առմամբ հիմնուած վերապրողներու բանաւոր վկայութեանց վրայ՝ գիրքին առաջին եօթը գլուխները կը խօսին նախքան ցեղասպանութիւնը Արեւմտահայաստանի ընկերային, քաղաքական եւ տնտեսական իրադրութեան, ցեղասպանութեան պատմա-քաղաքական նախադրեալներուն, հայ ականաւոր անձանց ձերբակալման, տեղահանութեան կարաւաններուն ենթարկուած դժբախտութեանց, զինազաղարէն ետք՝ որբահաւաքի, տեղահանուած ընտանիքներու վերապրող բեկորներու վերամիաւորման եւ ԱՄՆ հաստատուած վերապրողներու նոր Աշխարհին մէջ առած առաջին քայլերուն մասին: Հեղինակները իրենց հաւաքած 103 հարցազրոյցներուն վկայութիւնները կը համեմատեն դէպքերու ընթացքին դրի առնուած ամերիկեան դիւանագիտական փաստաթուղթերուն, Լորտ Պրայսի ու պատմաբան Առնոլտ Թոյնպիի

կողմէ պատրաստուած տեղեկագրին ու դէպքերուն ժամանակակից եւ ականատես օտարազգի պաշտօնեաներու, քարոզիչներու եւ այլոց թողած յուշագրութիւններուն հետ: Ըստ հեղինակներուն՝ այս երկու տարարնոյթ սկզբնաղբիւրներուն միջեւ ակնբախ են նմանութիւններն, զորս իրենք հակուած են բացատրելու իրենց դաժանութեամբ եզակի բնոյթ կրող այս դէպքերուն վերապրողներու յիշողութեան ու ենթագիտակիցին վրայ թողած ուժեղ եւ անջնջելի ազդեցութեամբ: Եւ քանի որ Միլլըրներու կողմէ հարցազրոյցի հրաւիրուած վերապրողներուն մեծ մասը եղեռնի օրերուն մանուկներ կամ առաւելագոյնը երիտասարդ նորահարսեր էին (նախ ոչնչացուեցան հասուն տղամարդիկը), հեղինակները կասկած չունին, որ իրենց պատրաստած գործը ցեղասպանութիւնը կը ներկայացնէ մանուկներու կողմէ դիտուած եւ որ վերջինս միշտ չէ որ կը համապատասխանէ ժամանակակից պատմագիտական ու հասարակագիտական ընկալումներուն: Այդ իսկ պատճառով՝ հեղինակներն առանձին գլուխ մը յատկացուցած են տեղահանութեան ու բռնազաղթի ընթացքին կանանց եւ մանուկներու ապրած փորձառութիւններուն, եւ փորձած՝ պայմանականօրէն դասակարգել անոնց կրած ֆիզիքական ու հոգեկան տառապանքները:

Վերջին երկու, այսինքն Ը- եւ Թ-, գլուխները ունին վերլուծական բնոյթ: Միլլըրները կ'ուսումնասիրեն ցեղասպանութեան թողած ազդեցութիւնը վերապրող սերունդին վրայ: Կը մատնանշեն այսօր վերապրողներուն մօտ ցեղասպանութեան եւ անոր թողած հետեւանքներուն կապակցութեամբ յառաջացած ազդեցութեանց եւ ըմբռնումներու մէջ որոշակի ընդհանուր դժեր, թէ այսօր վերապրողներն ի՞նչպէս կը փորձեն մեկնարանել այդ իրադարձութիւնները: Միլլըրները յատկապէս կ'ընդգծեն թէ, ի տարբերութիւն Եղեռնին յաջորդած սփիւռքահայ սերունդներուն թուրքերու վերաբերեալ միագոյն ընդհանրացումներուն, Եղեռնէն անմիջականօրէն վերապրողները միշտ կը տարբերակեն «լաւ» եւ «վատ» թուրքերը:

Ուսումնասիրութիւնն աւարտելով 1990 թուականին Հայաստան կատարած իրենց այցելութեան ընթացքին իրենց մօտ գոյացած որոշ տպաւորութիւններու շարադրմամբ, Միլլըրները կը շեշտեն թէ Եղեռնի ընթացքին զոհուած հայերու յիշատակին լաւագոյն յուշակոթողը կրնայ ըլլալ Հայաստանի Հանրապետութեան վերածնունդը իբրեւ քաղաքականօրէն անկախ եւ տնտեսապէս կենսունակ պետութիւն մը:

Միլլըրները իրենց գործին իբրեւ յաւելուած կցած են իրենց աշխատանքին ձեւը բացատրող գրութիւն մը եւ իրենց օգտագործած հարցարանը: Այս երկուքը ճանաչողական մեծ արժէք կը ներկայացնեն եւ կրնան ուղեցոյց հանդիսանալ բոլոր անոնց, որոնք մտադիր

են զբաղելու նոյնատիպ բանաւոր սկզբնաղբիւրներու հաւաքմամբ։
Ներկայացուած է նաեւ հարցազրոյցի ենթարկուած բոլոր 103 վե-
րապրողներուն անուանացանկը՝ իւրաքանչիւրին ծննդավայրի ու
ծննդեան թուականի նշումով։

Միլիոններու աշխատասիրութիւնը նոր էջ մը կը բանայ հայա-
գիտութեան մէջ։ Մինչեւ օրս պատմութեան բանաւոր աղբիւրներուն
օգտագործումը սահմանափակ բնոյթ կրած է հայագիտութեան մէջ,
մինչդեռ այդպիսի աղբիւրները անգնահատելի են ո՛չ միայն Եղեռնի
համընդհանուր պատկերը ուրուագծելու՝ այլեւ հայկական սփիւռքի
եւ Հայաստանի պատմութեան խորհրդային ժամանակահատուածի ա-
ռանձնայատկութիւններն ու ժողովրդային ընկալումները վերհանե-
լու համար։

Ուսումնասիրութիւնը զրուած է մատչելի եւ սահուն ոճով։ Ան-
կարելի է գայն կարդալ առանց յուզումի։ Միաժամանակ, անիկա յա-
ջողապէս դուրս կը հանէ հայկական ցեղասպանութիւնն իր ազգային
նեղ պարունակէն եւ ցեղասպանութեան հետեւանքով յառաջացած
հոգեկան ալեկոծումները կը դիտէ համամարդկային պաստառի վրայ։

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ